

ՄԻՖԵՐԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հարությունյան Ն. Ա. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)
narine.harutyunyan@ysu.am

Անտոնյան Ս. Ա. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)
sahakanush.antonyan@mail.ru

Ներկայացման ամս. 01.08.2020

Գրախոսման ամս. 30.08.2020

Տպագրության ընդունման ամս. 01.09.2020

Հոդվածը նվիրված է ընտանեկան հոգեբանության ու հոգեթերապիայի առանցքային երևույթներից մեկին՝ ընտանեկան միջերին: Աշխատանքում տեսական վերլուծության են ենթարկվում մասնագիտական գրականությանը հայտնի մի շարք դրույթներ, մոտեցումներ ու տեսակետներ, որոնք, ըստ էության, բացահայտում են ընտանեկան միջերի տեսակները, ձևավորման առանձնահատկությունները, նրանց գործառույթները, ազդեցության ձևերը ընտանեկան հարաբերությունների վրա և այլն:

Փորձ է արվել ընտանեկան միջերը ուսումնասիրել և վերլուծել սոցիալ-հոգեբանական մոտեցումներով: Կազմակերպված հետազոտության նպատակն է եղել բացահայտել ընտանեկան միջերի կապը ընտանիքի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների՝ հարմարման և համախմբման հետ: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ ընտանեկան սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները առավելապես պայմանավորված են ոչ թե միջուկայինության ընդհանուր արտահայտվածության աստիճանով, այլ ընտանեկան միջի բնույթով, բովանդակությամբ: Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել ընտանիքների հետ տարվող թերապևտիկ աշխատանքներում, ինչպես նաև կարող են հիմք հանդիսանալ երիտասարդ ընտանիքների հիմնախնդիրները ուսումնասիրել ընտանեկան միջերի տեսանկյունից:

Հանգուցային բառեր՝ ընտանեկան միջեր, իռացիոնալ դատողություններ, «մենք պատկեր», ընտանիքի սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններ, ընտանեկան համախմբվածություն, հարմարում, գործառնական ընտանիք, ապագործառնական ընտանիք:

Ներընտանեկան կառուցողական ու ներդաշնակ հարաբերությունների խնդիրը մեր օրերում շատ կարևոր է: Այդ հարաբերությունների բովանդակությունը ձևավորում են մի շարք գործոններ՝ անհատական, հոգեբանական,

հասարակական, սոցիալ-մշակութային և այլն: Համաձայն հոգեթերապևտիկ փորձի՝ յուրաքանչյուր ընտանիքում գոյություն ունի ընտանեկան ինքնությունը նկարագրող որևէ միջ կամ միջեր: Թեպետ այդ միջերի բովանդակությունը անձի կամ ընտանիքի անդամների կողմից գրեթե չի գիտակցվում, դրանք ակտիվանում և գործում են հիմնականում խնդրահարույց իրավիճակներում, այնուամենայնիվ ընտանեկան հարաբերությունների վրա միջերը ունեն էական ազդեցություն:

Միջը դեռ հնագույն ժամանակներից ուղղորդել է մարդկությանը, իր մեջ արտացոլելով մարդկանց պատկերացումներն ու ընկալումները աշխարհի վերաբերյալ: Համաձայն տարբեր տեսակետների՝ միջը իրենից ներկայացնում է անիրական պատմություն, որտեղ կարող են ամփոփվել համոզմունքներ՝ բնական, հասարակական, քաղաքական, սոցիալական, նաև ընտանեկան երևույթների մասին: Միջի ակունքները սկիզբ են առնում հին հունական դիցաբանությունից, որի բովանդակությունը հիմնականում նվիրված էր աստվածներին և նրանց գերբնական ուժերին [8]: Այժմ միջերը ներխուժել են կյանքի տարբեր ոլորտներ, համակարգեր ու հարաբերություններ: Ժամանակակից գիտության բնագավառների համար միջերը կարևոր ու հետաքրքիր տեղեկույթ են մարդկության պատմության, հերոսական կերպարների, հավատարմության, բարեկամության, սիրո և այլ երևույթների մասին:

Միջի հոգեբանական ասպեկտները բազմիցս քննարկվել են հոգեթերապևտների աշխատություններում: Առաջիններից են Ջ. Ֆրեյդը և Կ. Յունգը: Համաձայն Ջ. Ֆրեյդի (1917) միջերը ծագել են, որպես կոլեկտիվ երևակայական պատկերացումներ, որն արտացոլում է մարդկության հավաքական պահանջ-մունքներն ու ցանկությունները: Ըստ նրա միջերը բարդույթների պես ձևավորվում են կոմպենսացման կամ արտամղման ճանապարհով [9]:

Կ. Յունգի (1941) աշխատությունները, որտեղ միջը, առասպելական հերոսները, իրադարձությունները ենթարկվում են հոգեբանական վերլուծության՝ կոլեկտիվ անգիտակցականի, արքետիպերի միջոցով, բեկում առաջացրեցին հոգեթերապիայում [11]: Յունգի դրույթները թույլ են տալիս հոգեբաններին ժամանակակից մարդու կերպարը, վարքը, մտքերն ու հույզերը վերլուծել առասպելական կերպարների, իրադարձությունների ու երևույթների համադրությամբ:

Առաջին անգամ «ընտանեկան միջեր» հասկացությունը առաջադրել է Ա. Հ. Ֆերրեյրան (1966), ով սահմանում էր այն որպես՝ «որոշակի պաշտպանական մեխանիզմ, որը կիրառվում է ապագործառնական ընտանիքների ամբողջականությունը պահպանելու համար» [13, էջ 86]: Ինչպես տեսնում ենք Ֆերրեյրան ընտանեկան միջերը դիտարկում է ապագործառնական ընտանիքների համատեքստում, անմիջական կապ ստեղծելով ընտանեկան դժվարին իրավիճակների, հիմնախնդիրների և միջերի միջև, որպես պաշտպանական մեխանիզմների, որոնք՝ իրենց վրա կրելով այդ իրավիճակները հարթելու,

մեղմելու, բարելավելու, վերակառուցելու գործառույթ, ոչ թե ստեղծված իրավիճակը լուծելու ուղիներ են գտնում, այլ քողարկում կամ թաքցնում են իրական վիճակն ու հետևանքները, նպատակ ունենալով պահելու ընտանիքի կենսունակությունը:

Հոգեբանության մեջ միֆին փոխարինում են այլ հասկացություններ՝ իռացիոնալ համոզմունք, ընտանեկան հավատամք, նախապաշարմունք, պատրանքներ, իրավիճակային սցենարներ, ընտանիքի ներքին նկար և շատ այլ հասկացություններ, որոնք հիմնականում քննարկվում են «ընտանիքի մասին անձի խանգարված պատկերացումների հայեցակարգի» [10, էջ 38] ներքո [10]: Միֆը, որպես հորինված պատկերացում, ձևավորվում է ընտանիքի անդամների մոտ ընտանիքի պատմության, սցենարների, մշակութային արժեքների, հասարակական կարծիքի, ներընտանեկան արժեքների ու նորմերի, դաստիարակության հիման վրա, պահպանվում է ենթագիտակցական ոլորտում և փոխանցվում հաջորդ սերունդներ:

20-րդ դարի երկրորդ կեսերին, հոգեբանական խորհրդատվության և հոգեթերապիայի ոսկե ժամանակաշրջանում լայն թափով զարգացում ապրեց ընտանեկան հոգեթերապիան և ընտանեկան միֆերը դարձան գործնական հոգեբանների ուսումնասիրման ու վերլուծության առարկան: Հոգեթերապևտներ Վ. Սատիրը (1964, 1967), Է. Բեռնը (1964), Ա. Էլլիս (1962, 1972), Ս. Մինուխինը (1974), Միլանյան խումբը (1978), Լ. Բերգ-Կրոսսը (1987), Է. Գ. Էյդեմիլլերը (1990), Միշինան (1978, 1983), Ա. Յա. Վարգան (2001) իրենց պրակտիկ փորձով ու աշխատություններով հարստացրել են հոգեթերապևտիկ դաշտում ընտանեկան միֆերի մասին առկա պատկերացումները:

Հոգեթերապևտներ Ֆրեդերիկ Վամբուրտը և Սթիվեն Վոլինը իրենց «Իրականությունը և միֆերը ընտանեկան կյանքում. սերունդների միջև փոփոխությունները» (1989) աշխատությունում, ընտանեկան միֆերը սահմանում են որպես, ընտանիքի պատմությունը ամփոփող հիշողությունների, ընկալումների մի ամբողջություն, ինչը անհատը մանկության շրջանում ներքնայնացրել է և պահպանել ու ենթագիտակցորեն կիրառել ամբողջ կյանքի ընթացքում, չգիտակցելով անգամ դրա գոյության մասին [12]: Իսկ Օ. վան դեր Հարթը, Է. Վիթթթեմը և Ա. դե Վուրթը իրենց «Միֆերը և ծեսերը...» (1989) աշխատությունում, առաջ են քաշում հայեցակարգ, որտեղ ընտանեկան միֆերը ընտանիքի և նրա անդամների մասին պարզապես ավանդական հեքիաթներ են, որոնք ընտանիքի անդամները բանավոր փոխանցում են սերնդեսերունդ [12]:

Հետաքրքրական է Ա. Յա. Վարգայի մոտեցումը, համաձայն որի, միֆում առկա է գիտելիք, իմացություն այն մասին ինչն ընդունված է անել, ասել, գնահատել, զգալ, մտածել, և հակառակը՝ գիտելիք այն մասին, թե ինչ չի կարելի ասել, անել, զգալ ընտանիքում: Հարկ է ավելացնել, որ այդ գիտելիքը մշտապես արդի լինել չի կարող, այն ակտիվանում է ընտանեկան համակարգում որոշակի փոփոխություններին զուգընթաց, երբ տեղի է ունենում սոցիալական

տեղաշարժեր, երբ ընտանիքում առկա է ապագործառնական, ինչու չէ նույնիսկ, ճգնաժամային իրավիճակներ: Քանի որ միջը գիտելիք է, ըստ առաջարկվող հայեցակարգի, և այն վերաբերում է ընտանեկան հարաբերությունների կազմակերպմանը, կարգավորման բնույթին, դերային իրագործմանը, հուզական դրսևորումներին և այլն՝ ապա որպես իմացություն, միջը ընտանիքի անդամների մոտ կասկած չի առաջացնում: Ընտանիքի անդամները անվերապահորեն ընդունում են ընտանիքին վերագրվող բնութագրումները, հատկությունները, ընտանիքում գործող կանոնները, վարքի մոդելները, և դրանք ընդհանրացնելով տեղադրում միջի՝ «Մենք ենք» բանաձևի մեջ: Օրինակ՝ «մենք համերաշխ ենք», «մենք հերոսներ ենք», «մենք փրկիչներ ենք» և այլն [2]:

Թեպետ Վարգայի մոտեցման շրջանակներում միջը նույնացվում է գիտելիքի հետ, այնուամենայնիվ հոգեբանության մեջ միջին վերագրվում է իռացիոնալություն, այլ կերպ «ընտանեկան միջի հիմքում ընկած են իռացիոնալ համոզմունքները» (Ա. Էլիսս և ուրիշներ, 1969): Այսինքն՝ ընտանեկան միջը կազմավորվում է ընտանիքի, ընտանեկան կարգի, ներընտանեկան հարաբերությունների մասին իռացիոնալ դատողություններից, որոնք «ձևավորվում են անձի կոգնիտիվ սխալներից, ինչպիսիք են չափազանցելը, պարզեցումը, անտրամաբանական մտահանգումները, բացարձակացումը, առավել ընդհանրացումը» [7, էջ 216-217]: Համաձայն Ա. Էլլիսի իռացիոնալ դատողությունները անձի կողմից չեն ժխտվում, և չեն էլ հաստատվում, այլ կերպ նրանք անքննելի են, և արդյունքում թույլ չեն տալիս անձին համապատասխան գնահատելու իրադարձությունները և խելամտորեն լուծելու բախումնային իրավիճակները:

Համաձայն մի շարք հոգեբանների՝ միջը ընտանիքի պատմություն է, որը ընտանիքի յուրաքանչյուր անդամի ընկալման վրա իր հետքն է թողնում: Այն ձևավորվում է նշանակալից կամ շրջադարձային ընտանեկան իրադարձությունների, ընտանիքը շրջապատող միջավայրի, ընտանիքի անդամի որոշակի գործունեության արդյունքների և այլ գործոնների ազդեցությամբ: «Այն զույգերը, որոնք ստեղծում են կամ ձևավորում են ընտանեկան միջեր, արդյունքում դատապարտում են իրենց նրանում, որ թե՛ իրենք և թե՛ իրենց երեխաները գործելու են այդ երևակայության համաձայն» [1, էջ 234], այսինքն՝ աշխարհն ընկալելու են ձևավորված միջի տեսանկյունից, հետագա կյանքը կառուցելու են այդ միջի կանոններով, դրա շրջանակներում: Կարևոր է հասկանալ ինչպես են ձևավորվում միջերը: Ցանկացած ամուսնական զույգ ունենում է միջեր՝ ծնողական ընտանիքներից ժառանգած, և միջեր՝ սեփական, որոնք հենց իրենք են ձևավորում: Սակայն հոգեբանները գտնում են, որ միջերը ձևավորվելու, ամուսնական կյանքում կայանալու որոշակի ժամանակահատված են պահանջում, և այդ ժամանակաշրջանը երեք սերունդ է, որոնց կենսագործունեության ընթացքում այդ միջը ձևավորվում, կազմավորվում, դրվում է, այսպես ասած, շրջանառության մեջ, և ամրապնդվում երրորդ սերնդի մոտ: Հարկ է ավելացնել նաև, որ միջը սերնդեսերունդ փոխանցվելով ենթարկվում է

որոշակի ձևափոխման, այն երբեք նույնական չի կարող լինել, կրկնություն, պատճեն չի կարող լինել, որովհետև ամեն ընտանիք ունի իր յուրօրինակ կառուցվածքը, զարգացումը, դերային համակարգը, պատմությունը, ներընտանեկան հարաբերությունները և այլն [3, 8]:

Ընդհանուր առմամբ ընտանեկան միջերը հորինվում են ընտանիքի ներքին կենսագործունեությունը պահպանելու համար, և դրա բովանդակության հետ շատ հաճախ համաձայն չեն ընտանիքից դուրս գտնվող մարդիկ, ովքեր ինչ-որ առնչություն կարող են ունենալ ընտանիքի հետ: Օրինակ, ընտանեկան միջը այն մասին, որ «մեր ընտանիքում բոլորը մաթեմատիկայի ոլորտում հանճար են», կարող է չկիսել ուսուցիչը, ով մաթեմատիկա է դասավանդում այդ ընտանիքի երեխային [1; էջ 235]: Լ. Բերգ-Կրոսսը կարևորում է, ընտանեկան միջերի վերաբերյալ կողմնակի մարդկանց գնահատականների անհամապատասխանությունը միջի բովանդակության հետ, քանի որ դրա հետևանքով կարող է ընտանիքում մեծ լարվածություն, անհանգստություն առաջանալ, և ընտանիքը հաճախ է ապրում ամոթի զգացում, երբ իրենց պատկերացումները չեն համընկնում ուրիշի պատկերացումների հետ: Այս հանգամանքով է բացատրում Լ. Բերգ-Կրոսսը հերոսությունների ու հաղթանակների մասին միջեր ունեցող ծնողների զայրույթն ու ծանր ապրումները իրենց երեխաների անհաջողությունների նկատմամբ [1]: Ելնելով Լ. Բերգ-Կրոսսի գաղափարների վերլուծությունից, ընտանեկան միջերին կարելի է վերագրել հետևյալ 4 գործառույթները, ա) միջերը նպատակներ և որոշակի արժեքներ են ներմուծում ընտանիք, բ) դրանք ձևավորում են ընտանիքի հոգեբանական նույնականությունը, գ) ինչպես նաև միջերը կատարում են կապի գործառույթ, կապելով մի սերունդը մյուսի հետ, և դ) որը ամենակարևորն է՝ միտված են պահպանելու ընտանիքի կենսագործունեությունը:

Հոգեբան Ս.Մ. Միշինան, ուսումնասիրելով ընտանեկան ինքնագիտակցության, «մենք պատկեր»-ի ձևավորման առանձնահատկությունները գործառնականության տարբեր մակարդակներ ունեցող ընտանիքներում, հանգեց մի եզրակացության, որ գործառնական և ապագործառնական ընտանիքներում «մենք պատկեր»-ի ձևավորման հիմքում ընկած են տարբեր գործոններ: Համաձայն հեղինակի գործառնական ընտանիքներում «ընտանիքի պատկերը» ձևավորվում է հիմքում ունենալով ընտանիքի անդամների ընդհանուր արժեքներ, համաձայնեցված վարքի մոդելներ, համապատասխան դիրքորոշումներ և այլն, իսկ ապագործառնական ընտանիքներում «մենք պատկերը» ձևավորվում է հիմքում ունենալով ընտանեկան միջ կամ միջեր, որոնք քողարկում են ընտանիքի անդամների միջև ծագած բախումներն ու տարաձայնությունները, նրանց չբավարարված պահանջումներն ու սպասումները, և կարծես համաձայնեցնում ու ամբողջացնում են նրանց՝ իրար մասին ունեցած իդեալականացված պատկերացումները [4]: Համաձայն այս հայեցակարգի գործառ-

նական ընտանիքում «մենք պատկեր»-ի բովանդակություն են կազմում ընտանիքի մասին նրա անդամների այն պատկերացումները, որոնք համաձայնեցված և համապատասխան են օբյեկտիվ իրականությանը: Միշինան այդ «մենք պատկերը» կոչեց աղեկվատ կամ «համապատասխան մենք պատկեր»: Այլ է վիճակը ապագործառնական ընտանիքներում, որտեղ «մենք պատկերը» արտացոլում են ընտանեկան միջերը՝ որպես իռացիոնալ մտքերի և համոզմունքների, աղավաղված պատկերացումների համախումբ, որի արդյունքում կոչվեց «անհամապատասխան մենք պատկեր»:

Ընտանեկան հոգեբանության մեջ և հոգեթերապիայում տարբերակում են բազմաթիվ ընտանեկան միջեր, հայտնի են Ա. Էլլիսի, Լ. Բերգ-Կրոսսի, Պլանովայի, Ա. Նեստերովայի և այլոց դասակարգումները:

Տեղին է ներկայացնել հոգեբան Ա. Նեստերովայի առաջարկած դասակարգումը, որտեղ ընդգրկված են, համաձայն հեղինակի, ժամանակակից ընտանիքներում առավել հաճախ հանդիպող, առավել արդիական միջերը:

1. Հավերժական սիրո և ընտանիքի անդամների անբաժանելիության միջի հիմքում ընկած են պատկերացումներ այն մասին, որ ընտանիքը այն միջավայրն է, որտեղ գոյատևում է հավերժ ու անփոփոխ սերը: Այս միջի վրա հենվողները գտնում են, որ ընտանիքում դրսևորվող հույզերը փոփոխության չեն ենթարկվում: Ըստ անձի սերը տարիների հետ չի մարում, հակառակը՝ ապրումները նույն հագեցվածությունը պիտի ունենան, ինչ-որ ամուսնության սկզբում:

2. Սիրո հրաշագործ ուժի մասին միջի շրջանակներում բացառվում, ժխտվում են օբյեկտիվորեն գոյություն ունեցող պատճառները, որոնք կարող են ազդել ընտանիքի վրա: Համաձայն այս միջի, ընտանիքում ծագած ցանկացած խնդիր հնարավոր է լուծել միայն ամուսինների, ծնողների և երեխաների փոխադարձ սիրո շնորհիվ: Այդ գաղափարների վրա հենվողները բացառում են կառուցողական լուծումների անհրաժեշտությունը, խնդիրների շուրջ քննարկումները: Դժվարին իրավիճակները հաղթահարելու հմտությունների ձևավորման փոխարեն նրանց մոտ ձևավորվում է միջ՝ ըստ որի սերը կբուժի, կդաստիարակի, ամեն ինչ իր տեղը կդնի:

3. Ընտանեկան իրավիճակների բացարձակ լինելու մասին միջի պարագայում անձը ունի կարծր, միօրինակ պատկերացումներ և մոտեցումներ ընտանեկան տարբեր իրավիճակների շուրջ: Այս միջին բնորոշ պատկերացումներ ունեցողները կարծում են, որ ցանկացած իրավիճակ, կամ ցանկացած խնդիր ունի կոնկրետ լուծում, և բացառում են լուծման այլ տարբերակների, վարքի այլ հակազդումների գոյությունը:

4. Ընտանիքը գրոհող չար ուժերի մասին միջի հիմքում ընկած են ընտանիքից դուրս գտնվող որոշակի ուժերի (չար ուժերի) մասին պատկերացումները, որոնք ազդում են ընտանիքի վրա: Ըստ նրանց այդ ուժերն են խաթարում ընտանիքի խաղաղությունը, բացառելով ընտանիքի անդամների գործունեության ազդեցությունը ընտանիքի վրա:

5. Ընտանիքի և նրա անդամների համար զոհաբերության անհրաժեշտության մասին միջի բովանդակությունն այն է, որ ընտանիքի յուրաքանչյուր անդամ պետք է գնա որոշակի զոհողությունների, հրաժարվի որոշ ցանկություններից, հետաքրքրություններից հանուն ընտանիքի, երեխաների, կողակցի: Այս միջին բնորոշ պատկերացումներ ունեցող անձը գտնում է, որ երջանիկ ընտանիք ունենալու համար ամուսինները պետք է լինեն անշահախնդիր և մտածեն ընտանիքի մասին:

6. Ընտանեկան բարեկեցության մշտականության մասին միջի կրողները գտնում են, որ ընտանեկան երջանկությունը և բարեկեցությունը մշտական է: Համաձայն այս միջի՝ երջանիկ ընտանիքում տեղ չունեն բախումներն ու տարածայնությունները: Ըստ նրանց ընտանիքի անդամները պետք է ունենան դրական վառք և վարվեցողություն, թույլ չտան այնպիսի գործողություններ, որոնք կխաթարեն ընտանեկան երջանկությունը [5]: Ավելացնենք, որ համաձայն Ա. Նեստերովայի վերոնշյալ միջերը ժամանակ առ ժամանակ ակտիվացնում և արդիականացնում են 4 խումբ գործոններ՝ սոցիալ-մշակութային, սոցիալ-խմբային, ներընտանեկան, անձնային, որոնց նա կոչեց ընտանեկան միջերը ակտիվացնող դետերմինանտներ [6]:

Նպատակ ունենալով ուսումնասիրել ընտանեկան միջերի և ընտանիքի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների դրսևորումների միջև առկա կապերը, իրականացրել ենք հետազոտություն երկու փուլով: Առաջին փուլում ուսումնասիրել և վերլուծել ենք ընդհանուր միջոլոգիականության մակարդակը ընտանիքում: Ընդհանուր միջոլոգիականության մակարդակը ուսումնասիրելու համար կիրառել ենք «Ընտանեկան միջի վերլուծություն» հարցարանը (Ա. Նեստերովա, 2017) [5]: Օրինաչափ համեմատական վերլուծություն ստանալու համար առանձնացրել ենք այն ընտանիքները, որտեղ ամուսնական զույգի մոտ գրանցվել է համարժեք միջոլոգիականության մակարդակ, այսինքն միջոլոգիականության ընդհանուր մակարդակը բարձր, կամ ցածր է գրանցվել թե կնոջ, թե տղամարդու մոտ: Այդպիսով հետազոտական ընտրանք են հանդիսացել երեխաներ ունեցող, 3-7 տարվա ամուսնական կյանքի տևողությամբ 40 ամուսնական զույգեր: Որպես հետազոտական համակազմ երիտասարդ ընտանիքիների ընտրությունը հիմնավորվում է չեխ հոգեբան և հոգեթերապևտ Մ. Պլզակի (1973) առաջարկած ընտանիքի զարգացման հայեցակարգով, ըստ որի ամուսնական կյանքի 3-7 տարվա ժամանակահատվածը համարվում է առավել բարդ, նույնիսկ ճգնաժամային փուլ [15]: Հետևաբար՝ ընտանեկան միջերի ուսումնասիրությունները այդ փուլում առավել նպատակահարմար են, քանի որ միջերը ակտիվանում են ընտանիքի դժվարին իրավիճակներում, ընտանեկան ապագործառնության միջավայրում:

Վերլուծելով ընտանեկան միջերի դրսևորման ցուցանիշները, հետազոտվող ընտանիքները դասակարգեցինք երկու ենթախմբի՝ առաջին ենթախմբում ընդգրկվեց 21 ամուսնական զույգ՝ բարձր ($M=23.3$; $=2.17$) ընդհանուր


միֆոլոգիականության ցուցանիշներով, և երկրորդ ենթախումբ թվով 19՝ ընդհանուր միֆոլոգիականության ցածր ($M=14$; $\sigma=2,13$) ցուցանիշներ արձանագրած ընտանիքներ:

Երկրորդ փուլում հետազոտել ենք ընտանեկան համախմբվածությունն ու հարմարումը, որպես ընտանիքի սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններ «Ընտանեկան հարմարման և համախմբման սանդղակ» (FACES-3) հարցարանի միջոցով (Դ. Օլսոն և ուրիշներ, 1986) [14]:

Ըստ էության համախմբվածությունը արտացոլում է ընտանեկան հարաբերություններում հուզական կայունությունը: Մեթոդիկան թույլ է տալիս տարբերակել հուզական կայունության չորս ձև, որոնցից է ընտանիքի անդամների միջև եղած հուզական կապերի խզվածությունը կամ մեկուսացված լինելը: Այն հետազոտվողները (I–19.05%, II–10.53%), որոնց ցուցանիշները վկայում են խզված կապերի առկայության մասին, գտնում են, որ ընտանեկան հարաբերությունները ջերմ չեն, որ ընտանիքի անդամները հուզականորեն օտարացած են իրարից, չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ և միասին լուծել խնդիրները:

Հաջորդը հուզական կապվածությունն է, ըստ Օլսոնի միավորված (I–4.76%, II–21.05%) և չմիավորված (I–71.43%, II–57.89%) հարաբերությունների դրսևորմամբ, որը դիտվում է, որպես հուզագագնունքային կապի լավագույն ձև և հուզական ապրումակցման ու համակրանքի բարձր մակարդակ: Իրենց ընտանեկան հարաբերությունները նման կերպ գնահատող անհատները կարևորում են ընտանիքի անդամների միջև եղած հուզական հարաբերություններում նրանց ներգրավվածությունը, նման ընտանեկան մթնոլորտը հագեցած է դրական հարաբերություններով, մտերմությամբ, կապվածությամբ, հուզագագնունքային բավարար դրսևորումներով:

Ի վերջո հուզական կապի չորրորդ ձևը՝ խճճված հուզական հարաբերություններն են, որտեղ բացակայում է ընտանիքի անդամների հույզերի, մտքերի, ցանկությունների տարբերակվածությունը: Հետազոտվողները (I–4.76%, II–10.53%), որոնց միավորները այս տիրույթում են, նշում են ներընտանեկան հարաբերությունների չափազանց սերտ, ձուլված ու միախառնված լինելը, որտեղ անձը կորցնում է անհատականությունը, ազատ շարժման տարածությունը, սեփական ուժերի նկատմամբ վստահությունը:



Նկար 1. Համախմբվածության միջինացված ցուցանիշներ (n=80):

Մեր կողմից ստացված արդյունքների միջինացված արժեքների վերլուծությունը ցույց է տալիս, որ բարձր և ցածր միֆոլոգիականություն ունեցող ընտանիքների ենթախմբերում ընտանեկան համախմբվածության դրսևորումները էականորեն չեն տարբերվում: Միջինացված արդյունքները գրեթե նույնական են երկու ենթախմբերում, ինչը թույլ է տալիս ասելու, որ ընտանիքի անդամների հուզական կայունությունը պայմանավորված չէ ընդհանուր միֆոլոգիականության արտահայտվածության աստիճանով, այսինքն՝ ընտանեկան միջերը կարող են կայունացնել հուզական հարաբերությունները, ինչպես նաև նպաստել դրանց խզմանը:

Հարմարումը արտացոլում է ընտանիքի կառավարման համակարգի բնույթը, կառավարման ոճը, ընտանիքի անդամների կողմից գործառույթների իրագործման ձևը: Անձինք (I–4.76%, II–5.26%), ովքեր ընտանեկան հարմարման սանդղակում արձանագրել են ցածր ցուցանիշներ, համարում են, որ իրենց ընտանեկան համակարգը, դերային կառուցվածքը կարծրացած է, ոչ ճկուն: Դա նշանակում է, որ կառավարման կարծր, միանձնյա ոճը, առկա հիերարխիկ համակարգը խիստ կենտրոնացնում են ընտանիքի անդամների գործառույթները, նման մթնոլորտում ընտանիքի անդամները, կարծես, հրաժարվում են փոխվել, պարզապես մնում են հարմարված ստեղծված իրավիճակներին, որի հետևանքով էլ ծագած խնդիրները չեն կարողանում լուծել:


Կառուցվածքային ընտանեկան հարմարում ունեցող ընտանիքներին բնորոշ է հարմարման միջին ճկունություն: Այն հետազոտվողները (I–14.25%, II–47.37%), որոնց արձանագրած ցուցանիշները միջին են արժեքների սանդղակում են, գտնում են, որ ընտանիքի անդամները ազատ զրուցում ու

քննարկում են ծագած խնդիրների շուրջ, որոնում են լուծումներ: Քանի որ դերային կառուցվածքի, կանոնների և նորմերի հիմնումն ու կազմակերպումը ընտանիքում տեղի է ունենում համաձայն անդամների կարծիքների ու ցանկությունների, ապա այդ ընտանիքներում որոշակիորեն կայունացված է դերային համակարգը և ներընտանեկան հարաբերությունները կանոնակարգված են:

Ճկուն հարմարում ունեցող ընտանիքներում (I–33.33%, II–15.79%) ակտիվ բանակցություններ են ընթանում ընտանիքի անդամների միջև, ընտանեկան կանոնները և դերային բաշխվածությունը կարող են փոփոխվել: Ճկուն ընտանեկան համակարգի հիմքում իրավահավասարության սկզբունքն է, որտեղ նոր առաջադրանքների, խնդիրների լուծման և գործառույթների իրագործման ժամանակ հեշտությամբ են փոխվում դերային համակարգը և կառավարող նորմերը:

Իսկ ահա քառսային ընտանեկան հարմարման պարագայում, ընտանեկան համակարգը անկանխատեսելի բնույթ ունի՝ ընտանեկան կանոններն ու դերային բաշխվածությունները կարող են փոխվել ցանկացած պահի, անկախ իրավիճակից:

Հարմարման ցածր ցուցանիշներ գրանցած անձինք (I–47.60%, II–31.58%), գտնում են, որ իրենց ընտանեկան համակարգին բնորոշ է անկայունություն, ընտանիքի անդամների պարտականությունների անորոշություն: Քանի որ հստակ ու կանոնակարգված չեն դերային պարտականությունները, անդամները դրանց իրագործման նկատմամբ դրսևորում են անպատասխանատվություն:



Նկար 2. Հարմարման միջինացված ցուցանիշներ (n=80):

Միջինացված արժեքների վերլուծությունը ցույց է տալիս, որ հարմարման ցուցանիշները համարժեք են բարձր և ցածր միջոլորգիականություն ունեցող

ընտանիքների ենթախմբերում, ինչը ևս մեկ անգամ ապացուցում է ընտանիքում միֆի դերի երկակիության մասին: Ասենք նաև, որ մեր ստացված ցուցանիշները նորմայի սահմաններում են, բացառությամբ հարմարման քառասյին ձևին վերագրված ցուցանիշների: Այն գերազանցում էր նորման երկու ենթախմբերում: Սա կարելի է բացատրել երկու տեսանկյունից, նախ որ հայկական ընտանիքները դերային համակարգի բաշխվածության առումով միջանկյալ են՝ որպես ավանդականի և էգալիտարի միախառնում, որի հետևանքով դերային համակարգը կարելի է դիտարկել ոչ հստակ կամ չկանոնակարգված: Ընտանեկան հարաբերություններում դերային համակարգի քառասյին ձևին վերագրված բարձր ցուցանիշները պայմանավորված են նաև հայկական ընտանիքներին բնորոշ բարձր երեխայակենտրոնությամբ, հատկապես, եթե ընտանիքը մի քանի սերունդ ունի:

Այսպիսով, ամփոփելով իրականացրած հետազոտության արդյունքները, կարող ենք ասել, որ ընտանեկան միֆերը կարող են ընտանիքի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների վրա ազդել երկակի: Այսինքն, ընտանեկան միֆը կատարում է երկու գործառույթ, որոնց պայմանականորեն կարելի կոչել կոնստրուկտիվ և դեստրուկտիվ: Մի դեպքում, հանդես գալով որպես պաշտպանական մեխանիզմ, օգնում է ընտանիքի անդամներին նկարագրելու իրենց, և իրենց ընտանիքը, որպես մեկ ամբողջություն, տալիս է հնարավորություն հարմարվելու, համախմբվելու և կառուցելու հարաբերություններ թե ընտանիքի ներսում, թե ընտանիքից դուրս, այն թույլ է տալիս արձագանքելու ընտանիքից դուրս կատարվող իրադարձություններին, տալիս է վստահություն և ուժ գոյատևելու կամ ապահովելու ընտանիքի երկարակեցությունը: Մյուս կողմից, այդ իռացիոնալ, աղավաղված դատողությունները, մտքերն ու պատկերացումները, խանգարում են ճիշտ և համապատասխան գնահատել ընտանիքի հնարավորություններն ու ռեսուրսները, միջանձնային հարաբերությունների իրական բնույթն ու դրսևորումները՝ դառնալով ընտանեկան համակարգի կազմավորման, կայուն հարաբերությունների ձևավորման խոչընդոտ:

Հոգեթերապևտիկ փորձը փաստում է, որ աշխատանքի ընթացքում կարևոր է որոշել, գտնել, դուրս բերել միֆը, ներկայացնել այն ընտանիքին, նրա բացասական և իռացիոնալ բնույթը հասցնել նրանց գիտակցությանը, մեկնաբանել, թե որքանով է այն սահմանափակում յուրաքանչյուր անդամի ինքնուրույն գործելու հնարավորությունները, որքանով է խոչընդոտում իրականության ընկալումը: Ընտանեկան միֆերի հետ աշխատելիս նախ պետք է հայտնաբերել, թե որ միֆը կամ միֆերն են գործում ընտանիքում, քանի որ ինչպես պարզվեց ընդհանուր միֆոլոգիականությունը այնքան էլ չի կողմնորոշում ընտանիքի կայունությունն ու բարեկեցությունը, առավել կարևոր է միֆի բնույթը, տեսակը, բովանդակությունը, ամրապնդվածության աստիճանը ընտանիքում: Ինչպես նաև անհրաժեշտ է, հասանելի դարձնել ընտանիքին, որ

ընտանիքը ընդունի և գիտակցի, որ իրենց գործունեությունը, ընտանեկան բարեկեցությունը, համատեղելիությունը եղել է միայն միջի շրջանակներում, որ միջից դուրս այն գոյություն ունենալ դժվար թե կարողանա, քանի որ պայմանավորված է եղել առկա իռացիոնալ պատկերացումներով:

Գրականություն

1. **Берг-Кросс Л.** Терапия супружеских пар / Перев. с англ. Н. Рассказовой, А. Багрянцевой. - М.: Изд-во Института психотерапии, 2004. - 528 с.
2. **Варга А. Я.** Семейные мифы в практике системной семейной психотерапии // Журнал практической психологии и психоанализа. 2001. №1-2. - с. 65-76
3. **Варга А. Я.** Системная семейная психотерапия. Краткий лекционный курс, СПб.: «Речь», 2001, 144 с.
4. **Мишина Т. М.** Семейная психотерапия и динамика «образа семьи» // Психогигиена и психопрофилактика: Сб. науч. Трудов (под редакцией Мягер В.К., Козлова В.П., Семеновой-Тянь-Шанской) Л., 1983, С. 21-26.
5. **Нестерова А. А.** Разработка и валидизация диагностического опросника «Анализ семейного мифа» /Ветник МГОУ. Серия; Психологические науки. 2017 /N 1, с. 33-49.
6. **Нестерова А. А.** Социально-психологические детерминанты семейных мифов: дисс. канд. психол. наук, М.: 2004. 192с.
7. **Слепкова В. И.** Психология семьи /Авт. сос. В. И. Слепкова. Минск: Харвест, 2006. – 496 с.
8. **Фонталова Н.С.** Психология семьи и семейное консультирование : учеб. пособие / Н.С. Фонталова. Иркутск : Изд-во БГУЭП, 2013. – 136 с.
9. **Фрейд З.** Введение в психоанализ: лекции /пер. с нем. Г. Барышниковой-М.: изд. «Э», 2018. – 480 с.
10. **Эйдемиллер Э.Г., Юстицкий В. В.** Семейная психотерапия. Л.: Медицина, 1990. – 192 с.
11. **Юнг К. Г.** Душа и миф: шесть архетипов. Пер. с англ. Киев: Государственная библиотека Украины для юношества, 1996. — 384 с
12. Family myths: psychotherapy implications / **Stephen A. Anderson, Dennis A. Bagarozzi** - New York, The Haworth Press, 1989. - 213p
13. **Ferreira A. J.** Family myths // Psychiatric Research Reports. № 20. 1966. P. 85-90.
14. **Olson D. H.** Circumplex Model VII: Validation studies and FACES III. Family Process, 25, 1986. p.337—351.
15. **Miroslav Plzák: Manželská tonutí. Motto Praha 2005.**
<http://www.psychoweb.cz/psychologie/manzelska-tonuti-m-plzak-manzelske-problemy-recenze/>.(Այց՝ 25.06.2020)

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ И ФУНКЦИОНИРОВАНИЯ МИФОВ В КОНТЕКСТЕ СЕМЕЙНОЙ ПСИХОЛОГИИ

Арутюнян Н. А. (ЕГУ, Ереван, Армения)

Антонян С. А. (ЕГУ, Ереван, Армения)

Статья посвящена одному из ключевых аспектов семейной психологии и психотерапии - семейным мифам. В работе теоретически анализируется ряд известных в профессиональной литературе позиций, подходов и взглядов, по сути раскрывающих типы семейных мифов, особенности формирования, их функции, эффекты влияния на семейные отношения и др.

Была сделана попытка изучить и проанализировать семейные мифы с помощью социально-психологических подходов. Целью организованного исследования было выявление связи семейных мифов с социально-психологическими особенностями семьи: адаптации и сплоченности. Результаты показывают, что социально-психологические особенности семьи во многом обусловлены не степенью общей выраженности мифологии, а характером и содержанием семейного мифа. Результаты исследования могут быть полезны в терапевтической работе с семьями, а также могут быть основой для изучения проблем молодых семей с позиций семейных мифов.

Ключевые слова. Семейные мифы, иррациональные суждения, «мы-образ», социально-психологические особенности семьи, семейная сплоченность, адаптация, функциональная семья, дисфункциональная семья.

PSYCHOLOGICAL FEATURES AND OPERATION OF MYTHS IN THE CONTEXT OF FAMILY PSYCHOLOGY

Harutyunyan N. A. (YSU, Yerevan, Armenia)

Antonyan S. A. (YSU, Yerevan, Armenia)

The article focuses on one of the key aspects of family psychology and psychotherapy - family myths. The work theoretically analyzes a number of positions, approaches and views known in the professional literature, which in essence reveal the types of family myths, the peculiarities of formation, their functions, the effects of influences on family relations, etc.

An attempt was made to study and analyze family myths with social-psychological approaches. The aim of the organized research was to reveal the connection between family myths and the socio-psychological characteristics of the family: adaptation and consolidation. The results show that the socio-psychological features of the family are mostly conditioned not by the degree of general expression of mythology, but by the nature and content of the family myth. The results of the research can be useful in

therapeutic work with families, as well as can be a basis for studying the problems of young families in terms of family myths.

Keywords. *Family myths, irrational judgments, «we are the image», socio-psychological features of the family, family cohesion, adaptation, functional family, dysfunctional family.*